ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

24.12.2014

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1.2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկ. Վ. Ալեքսանյան/:

2.2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը /Զեկ. Վ. Ալեքսանյան/:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ օրակարգի առաջին կետի վերաբերյալ զեկուցողը հայտնեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների կազմակերպչական աշխատանքները անցել են սահուն, նախապես կազմված ժամանակացույցով: Ընթացիկ քննությունների և ստուգումների ճիշտ կազմակերպումը կարևոր դեր ունի ուսանողների գիտելիքների մաս-մաս ստուգման մեխանիզմի կատարելագործման գործում: Հարկ է նշել, որ քննական թեստերի կազմման գործում կիսամյակից կիսամյակ նկատվում է մասնագիտական կատարելագործում: Սակայն որոշ դասախոսների քննական թեստերը դեռևս բավականին մատչելի էին և այդ պատճառով մի շարք առարկաների գծով արձանագրվել են բարձր արդյունքներ: Այդ բանը հատկապես նկատելի էր «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության դասախոսների շրջանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ՝ դեկանը զեկուցեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Ամբիոններում հարցատոմսերը քննարկվել են և հաստատվել: Վերստին շեշտադրվեց քննությունների ընթացքում դասախոսների կողմից անաչառ վերաբերմունքի դրսևորումը: Ուսանողը պետք է քննասենյակից հեռանա իր ստացած միավորի հավաստիության համոզվածությամբ: Դեկանը ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի ուսանողներին հորդորեց ներկա գտնվել քննական գործընթացներում՝ կանխելու հնարավոր սուբյեկտիվիզմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Վ. Վանեսյանը, Դ. Քոքոբելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2014-2015 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. Ղևոնդյան